Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2026թ. մայիսի 19-ից 22-ը՝ Ավստրիայի մայրաքաղաք Վիեննա գործուղման արդյունքների մասին

1. <u>Անունը, ազգանունը</u>

Նարեկ Ապիտոնյան

2. <u>Զբաղեցրած պաշտոնը</u>

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

3. <u>Գործուղման վայրը և ժամկետները</u>

Ավստրիա, մայրաքաղաք Վիեննա

4. <u>Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)</u>

"Knowledge Series: Financing Secure Energy Systems" խորագրով միջոցառումն անցկացվում է ՕՊԵԿ Միջազգային զարգացման հիմնադրամի (OPEC Fund) և Համաշխարհային բանկի համատեղ նախաձեռնությամբ: Միջոցառման հիմնական նպատակն էր քննարկել անվտանգ և կայուն էներգետիկ համակարգերի ֆինանսավորման մեխանիզմները, էներգետիկ անցման ռազմավարությունները, կլիմայական ֆինանսավորման հնարավորությունները, ինչպես նաև պետական և մասնավոր հատվածների միջև համագործակցության արդյունավետ ձևաչափերը:

5. <u>Քննարկված թեմաները</u>

Առանցքային խնդիրներից մեկը վերաբերում էր ՕՊԵԿ Միջազգային զարգացման հիմնադրամի կողմից էներգետիկայի ոլորտում հնարավոր ֆինանսավորման մեխանիզմներին: Խոսքը մասնավորապես վերաբերում է բյուջետային վարկերի

տրամադրմանը, որոնք կարող են ուղղվել ոլորտային քաղաքականության մշակմանն ու բարեփոխումների իրականացմանը: Միաժամանակ կարևոր է հանգամանքը, որ ՕՊԵԿ-ի կողմից հնարավոր է դիտարկել նաև տեխնիկական աջակցության, ինչպես նաև դրամաշնորհային միջոցների և գրանտների ներգրավման հնարավորությունները՝ էներգետիկ ծրագրերի արդյունավետ իրականացման և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման նպատակով:

Այս ամենի շրջանակներում քննարկվել են նաև Համաշխարհային Բանկի հետ համատեղ ծրագրերի իրականացման հնարավորությունները:

6. <u>Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը</u>

7. <u>Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.</u>

8. <u>Ստորագրությունը, ամսաթիվը</u>

Recoverable Signature

X

Ստորագրող
ՆԱՐԵԿ ԱՊԻՏՈՆՅԱՆ
1203850719

2026-05-29 23:00:42 GMT+4
Հավաստված է ԷԿԵՌԿ-ի կողմից

Signed by: APITONYAN NAREK 1203850719

29.05.2026թ.